

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման գործընթացում արձանագրված որոշ խնդիրների լուծման ուղղությամբ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության¹ շրջանակում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների իրականացման արդյունքում հրապարակվել են հանքարդյունահանող ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունները՝ առայժմ PDF ձևաչափով:

Սույն փաստաթղթով ներկայացվում են մետաղական հանքավայրերը շահագործող և ուսումնասիրող ընկերությունների իրական սեփականատերերի հայտարարագրերի ուսումնասիրության արդյունքում վերհանված խնդիրները և ներկայացվում են օրենսդրական առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ.

- Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ունեցող 26 ընկերություններից իրական սեփականատերերի հայտարարագիր են ներկայացրել բոլոր 10 փակ բաժնետիրական ընկերությունները (ՓԲԸ) և 16 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից (ՍՊԸ)² 11-ը²: Կայքում առկա չեն արդյունահանման թույլտվություն ունեցող 5 ՍՊԸ՝ «Ֆոռչն Ռիզորսիս» ՍՊԸ, «Վաք Գոլդ» ՍՊԸ, «Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ, «Բակտեկ Էկո» ՍՊԸ, «ՄեգոԳոլդ» ՍՊԸ հայտարարագրերը³:
- Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ունեցող 13 ընկերություններից (14 թույլտվություն) միայն 4-ն են ներկայացրել հայտարարագիր⁴:
- Հայաստանի՝ ԱՃԹՆ գործընթացին միանալուց հետո, հիմնականում՝ 2018 թվականից, մի շարք ընկերություններում («Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ, «Զանգեզուրի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» (ԶՊՄԿ) ՓԲԸ, «Լեռ-Էքս» ՍՊԸ, «Թեղուտ» ՓԲԸ, «Զարաստ Կապան» ՓԲԸ, «Ատ-Մետալս» ՍՊԸ, «Լիճքվազ» ՓԲԸ, «Թաթաթոուն» ՍՊԸ) արձանագրվել է իրական սեփականատերերի և կառավարման մարմինների փոփոխություն:⁵ Մասնավորապես, զգալիորեն

¹ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, www.eiti.am

² «Հրաշք մետաղ» ՍՊԸ-ն ներառված է ԱՃԹՆ զեկույցում որպես արդյունահանման թույլտվություն ունեցող 17-րդ ընկերություն, սակայն դրա ընդերքօգտագործման պայմանագիրը դադարեցված է՝ <http://www.mtad.am/hy/mtad13.02.3>:

³ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայք, www.mtad.am/hy/mtad27.12:

⁴ Նույն տեղում՝ www.mtad.am/hy/mtad27.12.2: Հայտնի չեն տվյալներ հայտարարագիր չներկայացնող ընկերությունների նկատմամբ կիրառված պատասխանատվության վերաբերյալ:

⁵ Հարկ է նշել, որ առնչվող բաց պաշտոնական աղբյուրներում երբեմն ներկայացվում են ոչ նույնական տվյալներ: Այսպես ԶՊՄԿ կայքում հրապարակված՝ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված «Ծրագրային ազդագիրը»՝ http://www.zcmc.am/files/ZCMC_CJSC_Prospectus%20Supplement.pdf և ԶՊՄԿ-ի թողարկած պարտատոմսերը տեղաբաշխող Ամերիա բանկի կայքը՝ https://ameriabank.am/content.aspx?id=zangezur_bond_usd_september&page=100&itm=retail%201.1.1&lang=33&fbclid=...

փոխվել է Հայաստանի ամենախոշոր հանքարդյունահանող ընկերության՝ ԶՊՄԿ սեփականատերերի կազմը, և ընկերությունը իրականացրել է իր բաժնետոմսերի 62.5 %-ի հետգնում, որը մեկ տարվա ընթացքում օրենքի պահանջով ենթակա է լինելու տեղաբաշխման կամ մարման:⁶

- Մի շարք ընկերություններ («Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, «Թեղուտ» ՓԲԸ, «Չարաստ Կապան» ՓԲԸ, «Թաթսթոուն» ՍՊԸ, ինչպես նաև «Գեոպրոմայնինգ» ՓԲԸ սեփականատերերի հետ փոխկապակցված բոլոր 5 ընկերությունները) ունեն խիստ խճողված կառուցվածք՝ բազմաթիվ միջանկյալ իրավաբանական անձանց մասնակցությամբ:
- Հինգ տարբեր ընկերությունների («Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, «Սազամար» ՓԲԸ, «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ և «Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ) իրական սեփականատերերը հիմնականում նույն մարդիկ են:
- Բազմաթիվ ընկերությունների («Թեղուտ» ՓԲԸ, «Չարաստ Կապան» ՓԲԸ, «Թաթսթոուն» ՍՊԸ) ուղղակի բաժնետերերը կամ միջանկյալ իրավաբանական անձինք գրանցված են օֆշորային գոտիներում՝ Կիպրոս, Մեն կաղզի, Բերմուդյան կղզիներ, Վիրջինյան կղզիներ և այլն:⁷
- Մի շարք ընկերությունների (ԶՊՄԿ ՓԲԸ, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ, «Թեղուտ» ՓԲԸ, «Չարաստ Կապան» ՓԲԸ) իրական սեփականատերերի տվյալները ամբողջովին բացահայտված չեն, թեև ներկայացված են այնքանով՝ որքանով պահանջվում է ՀՀ օրենսդրությամբ:
- Որոշ ընկերությունների տվյալները («Թեղուտ» ՓԲԸ, «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ, «Լեո-Էքս» ՍՊԸ) լիարժեք չեն: Մասնավորապես՝ Թեղուտի պարագայում լրացված չէ միջանկյալ իրավաբանական անձի ցուցակման բորսան, բաժնետերերի ձեռքբերման ամսաթիվը: «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ն ներկայացվել է միջազգային մասնակցությամբ կազմակերպություն, այն դեպքում, երբ դրա բաժնետերը գրանցված ընկերություն է: «Լեո-Էքս» ՍՊ ընկերության կանոնադրական կապիտալում 100% բաժնեմասի սեփականատեր «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը ցուցակված է Հայաստանի ֆոնդային բորսայում,⁹ սակայն այդ մասին «Լեո-Էքս» ՍՊ ընկերության հայտարարագրում նշված չէ:
- Որոշ ընկերությունների («Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ, «Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ, «Ղարազյուլյաններ» ՓԲԸ, «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ,

[d=IwAR1QeQBLA6f0nm1bSnpPgU1_yF_zV4h8_gIg2EJH_ARmSj1PFszdJJVRqvo](https://www.amx.am/am/18/listing/23/issuers/24/issuer-documents?issuer=299&year=2020) չեն ներառում թարմացված տվյալները:

⁶ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 58, մաս 7

⁷ ՀՀ կառավարության 01 հունիսի 2017 թվականի N 595-Ն որոշում «Օֆշորային գոտիների (երկրների) ցանկը սահմանելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=113698>

⁸ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն իր հայտարարագրում ոչինչ չի նշել ցուցակման մասին, ըստ երևույթին այն պատճառով, որ հայտարարագիրը ներկայացնելու պահին արդեն ցուցակված չէր, թեև ցուցակված էր Տորոնտոյի ֆոնդային բորսայում հաշվետու՝ 2019 թվականի ընթացքում:

⁹ <https://amx.am/am/18/listing/23/issuers/24/issuer-documents?issuer=299&year=2020>

«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ) հայտարարագրերը մասամբ կամ ամբողջությամբ լրացված են ձեռքով:

Ընդհանուր առմամբ՝ կարելի է եզրակացնել, որ իրական սեփականատերերի բացահայտման գործընթացը և արդյունքները թերի են՝ հիմնականում կարգավորումների անկատարության ու հայտարարագրման էլեկտրոնային համակարգի անպատրաստ լինելու, երբեմն նաև պահանջների ոչ պատշաճ կիրարկման պատճառով: Մի շարք ընդերքօգտագործող ընկերություններ հայտարարագրերը լրացնելիս դրսևորել են անփույթ և անպատասխանատու վերաբերմունք, որոշները չեն ներկայացրել հայտարարագրերը, մի մասն էլ՝ առավելագույնս օգտագործել է օրենսդրական բացերը՝ թաքցնելով իրական սեփականատերերին և/կամ կասկածելի շտապողականությամբ հասցրել է փոխել նրանց կազմը: Իրական սեփականատերերի բացահայտման առաջին իսկ փորձից արդեն կարելի է եզրակացնել, որ լրջագույն խնդիր է լինելու ներկայացվող տվյալների հավաստիության ապահովումը:

ՀՀ սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ընդերքը հանդիսանում է պետության բացառիկ սեփականություն, ուստի այն օգտագործող ընկերությունների սեփականատիրության պատկերը պետության և հանրության համար պետք է լինի հնարավորինս թափանցիկ ու ամբողջական:

Կարևոր է արձանագրել, որ աշխարհում ընկերությունների խճողված կառուցվածքները սովորաբար ձևավորվում են՝ թաքցնելու և «լվանալու» անօրինական ճանապարհով ձեռքբերված փողերը, քողարկելու հանցավոր գործունեության մեջ ներգրավված անձանց և հնարավոր արտաքին շահերը: Ընկերությունների իրական սեփականատերերի կամ միջանկյալ ընկերությունների վերաբերյալ տվյալների փակ լինելը կարող է ծնել ազգային անվտանգության հետ կապված լրջագույն ռիսկեր: Ուստի, չափազանց կարևոր ու հրատապ է իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների բացահայտման օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի բարելավումը:

Ստորև ներկայացվում են գործընթացում վերհանված օրենսդրական խնդիրներն ու դրանց լուծմանը միտված առաջարկություններ.

1. Հասկացության սահմանում

2019 թվականի նոյեմբերի 13-ին ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետում արված լրացմամբ ավելացվել է նոր պարբերություն, համաձայն որի՝ «...իրական սեփականատեր են համարվում նաև տվյալ ընկերության կառավարման միանձնյա և կոլեգիալ մարմինների (բաժնետերերի ժողովի ...) անդամ ֆիզիկական անձինք...»: Այս մոտեցումը հակասում է իրական սեփականատերերի փիլիսոփայությանը, ինչպես նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի

պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի սահմանմանը: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի նշված ձևակերպմամբ «գործադիր մարմնի ղեկավարը» և «խորհրդի անդամը» հավասարեցված են իրական սեփականատիրոջ կարգավիճակին, ինչը սկզբունքորեն սխալ է: Թեև հայտարարագիր ներկայացնող ընկերությունների գլխավոր տնօրենները և խորհրդի անդամները կարող են միաժամանակ լինել նաև բաժնետեր կամ այլ առումով համապատասխանեն օրենքով սահմանված «իրական սեփականատեր» հասկացության սահմանմանը, սակայն իրական սեփականատերերի հայտարարագրի ձևաթուղթն արդեն այդ խնդիրը լուծում է: Այս պարագայում, նման ֆիզիկական անձինք հայտարարագրի 9.7 կետի հիման վրա կհայտարարագրվեն որպես ընկերության կառավարման մարմնի անդամ կամ գործադիր մարմնի ղեկավար, իսկ 9.1 կետի պահանջով լրացուցիչ կներկայացնեն տվյալ կարգավիճակի համար պահանջվող տվյալները:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի «Օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններ» բաժնի առաջին մասին 26-րդ` «26) փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձինք» կետի (գ.) ենթակետում փոխկապակցված ֆիզիկական կամ իրավաբանական անձ է հանդիսանում «գ/ տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, վարչության նախագահ, վարչության անդամ կամ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ կամ կառավարման այլ մարմինների անդամը»: Միաժամանակ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու հանրային ծառայողների համար, որպես անհամատեղելության պահանջ է սահմանված «առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելը» (հոդված 31, մաս 6), որով որպես առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու պայման է դիտվում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից «որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը»: Անհրաժեշտ է հստակեցնել փոխկապակցված անձանց շրջանակը, որպեսզի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հնարավորություն ունենա նույնականացնելու ՔԱՌԻԱ-ների ներգրավածությունը ընկերությունների կառավարման գործառույթներում և հավաստիանալու նրանց պաշտոնի զբաղեցման անհամատեղելության պահանջի խախտումների տեղեկատվության մեջ:

Առաջարկություն

Ընդերքի օրենսգրքի 3-րդ հոդվածի 4.1 կետը հարկավոր է վերաձևակերպել այնպես, որ խորհուրդը կամ գործադիր մարմնի ղեկավարը անպայմանորեն չհամարվեն իրական սեփականատեր:

Անհրաժեշտ է ներդաշնակեցնել օրենսդրությունը՝ ՔԱՈՒԱ-ների մասով ունենալու նույնական ձևակերպում: Մասնավորապես, առաջարկվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի 26-րդ կետի գ) ենթակետում «կամ կառավարման այլ մարմինների անդամ» բառերը փոխարինել «որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը» բառերով:

2. Չհայտարարագրելու արտոնություն

Ըստ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 23-րդ կետի՝ տվյալ հոդվածով նախատեսված «իրական սեփականատերերի բացահայտման պահանջը չի տարածվում «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող իրավաբանական անձանց վրա»:

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն «հաշվետու թողարկող» է համարվում այն ընկերությունը, որի կողմից թողարկված որևէ դասի արժեթուղթը թույլատրված է ՀՀ տարածքում գործող կարգավորվող շուկայում առևտրին: Այլ կերպ ասած, իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ օրենսդրական պահանջները չեն տարածվում ՀՀ ֆոնդային բորսայում ցուցակված ընկերությունների վրա: Ըստ հայտարարագրերի՝ ՀՀ-ում ցուցակված են միայն ԶՊՄԿ ՓԲԸ որոշ քանակի պարտատոմսեր, իսկ մի շարք այլ ընկերություններ («Թեդուտ» ՓԲԸ, «Չաարատ Կապան» ՓԲԸ) իրենց իրական սեփականատերերի հայտարարագրում ներկայացրել են տվյալներ առ այն, որ իրենց ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի մասնակցություն ունեցող ընկերությունները ցուցակված են տարբեր երկրների ֆոնդային բորսաներում և այդ հիմքով չեն ներկայացրել այդ ընկերությունների իրական սեփականատերերին: «Լիդիան Արմենիա» ՓԲԸ հրապարակված հայտարարագրում լրացված չի ոչինչ, հավանաբար ելնելով նրանից, որ հայտարարագիրը ներկայացնելու պահին ցուցակված չի եղել, թեև այն ցուցակված է եղել հաշվետու տարվա ավարտի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Արդյունքում, այս բոլոր ընկերությունները չեն հայտարարագրել իրենց փաստացի սեփականատերերին:

Ֆոնդային բորսայում ցուցակված ընկերությունների իրական սեփականատերերին չբացահայտելու արտոնությունը ակնհայտորեն հիմնավորված չէ և խիստ խնդրահարույց է:

Նախ, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի համաձայն արժեթղթեր են համարվում ոչ միայն բաժնետոմսերը, որոնց սեփականատերերն իրենց պատկանող բաժնեմասի

համապատասխան տնօրինում են տվյալ ընկերության սեփականությունը, այլն՝ պարտատոմսերը, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի իմաստով հետագա մարման ենթակա, ժամանակավոր բնույթ ունեցող և ընկերության նկատմամբ սեփականության իրավունք չառաջացնող արժեթղթեր են: Պարտատոմսեր ձեռք բերողները չեն կարող համարվել տվյալ ընկերության իրական սեփականատեր, մինչդեռ, փաստորեն, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված բացառության շնորհիվ դրանք, ընդամենը իրենց ունեցած պարտատոմսերը բորսայում ցուցակելով, կարող են ձեռք բերել «հաշվետու թողարկողի» կարգավիճակ և ազատվել բաժնետոմսերին տիրապետող իրական սեփականատերերին բացահայտելու պարտավորությունից: Այսպիսի բացից է օգտվել ՋՊՄԿ-ն, որը Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակելով որոշակի քանակությամբ՝ 2022թ. սեպտեմբերի 30-ին մարման ենթակա պարտատոմսերը, համարվել է «հաշվետու թողարկող» ընկերություն:

Երկրորդ, նշված դրույթը ներմուծվել է ՀՀ օրենսդրության մեջ՝ թերևս հիմք ընդունելով միջազգային մակարդակում՝ ֆոնդային բորսաներում ցուցակված ընկերությունների համար նախատեսված իրավակարգավորումները՝ մասամբ ելնելով այն կանխավարկածից, որ իրենց բաժնետերերի ցուցակված լինելու փաստի ուժով ընկերություններն արդեն իսկ որոշակիորեն համարվում են թափանցիկ և վստահելի: Այդուհանդերձ դիտարկումները փաստում են, որ նույնիսկ արտասահմանյան ծանրակշիռ բորսաներում ներկայացվող բաժնետերերի վերաբերյալ տվյալները խիստ անբավարար են և չեն կարող ապահովել վստահելիություն:

Առաջարկություն

Անհրաժեշտ է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 23-րդ կետում կատարել փոփոխություն և վերացնել «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքին **հղումը**:

Նույն տրամաբանությամբ՝ հարկավոր է վերաձևակերպել ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի փետրվարի 05-ի «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը հաստատելու մասին» N 36-Ն հրամանով հաստատված Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի հավելված 1-ի բաժին Ա-ի 5.1 կետը՝ վերացնելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի վրա հղումը:

Առաջարկվում է հայտարարագրման **արտոնություն նախատեսել միայն վստահելի ֆոնդային բորսաներում բաժնետոմս ունեցող ընկերությունների համար և միմիայն**

ցուցակված բաժնետոմսերի ծավալի մասով: Վստահելի բորսաների ցանկը պետք է սահմանվի ՀՀ կառավարության կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

3. Սեփականատիրության կառուցվածք ու շրջանակ

Մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունների իրական սեփականատերերի հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայացված տվյալները չեն ստեղծում ամբողջական կամ ամբողջականին մոտ պատկեր ընկերությունների սեփականատիրության վերաբերյալ: Հայտարարագրերում կցկտուր ներկայացվող տվյալների համադրումից երբեմն ստացվում է բաժնետիրական կառուցվածքի չափազանց խառը ու շփոթեցնող պատկեր՝ խճողված անուղղակի մասնակցությամբ ընկերությունների ցանցով: Հաճախ ընկերությունները չեն ներկայացնում իրենց դուստր և կախյալ ընկերությունների բաժնետիրական փոխկապակցվածությունը կամ միմյանց կանոնադրական կապիտալում բաժնեմասնակցությունը: Նույն խնդիրն առկա է ՄՊԸ-ների պարագայում, որոնք թեև իրենց իրավաբանական կառուցվածքից ելնելով չունեն բաժնետերեր, սակայն կարող են բաժնետոմս ձեռք բերել բաժնետիրական ընկերություններում, կամ այլ ընկերություններ կարող են բաժնեմաս ունենալ նրանց մոտ: Առանձին հանքավայրերի իրական սեփականատերերի վերաբերյալ լրագրողական հետաքննությունը երբեմն բացահայտում է պաշտոնապես հայտարարագրվածից էականորեն տարբերվող պատկեր: Ակնհայտ է, որ օրենսդրական որոշ բացերը տեղիք են տալիս չարաշահումների:

2019 թվականի նոյեմբերի 13-ին ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետում արված վերոնշյալ լրացմամբ՝ իրական սեփականատերերի սահմանման մեջ «բաժնետերերի ժողովի» ներառումն ինքնին թվում է դրական, քանի որ առնվազն ակնկալում է բացահայտել առաջին մակարդակի բաժնետերերի շրջանակը, սակայն գործնականում այն շփոթեցրել է սահմանումներն ու հանգեցրել կամայական կիրարկման:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհացատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի իմաստով իրական սեփականատեր կարող են համարվել միայն ֆիզիկական անձինք, մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 106-116-րդ հոդվածների, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ բաժնետեր կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Նույն՝ «բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-38-րդ հոդվածների համաձայն, որևէ կազմակերպության անխտիր բոլոր բաժնետերերն ունեն տվյալ կազմակերպության բաժնետերերի ժողովին մասնակցելու և իրենց բաժնեմասին համապատասխան ձայնի իրավունքով որոշումների ընդունմանը մասնակցելու իրավունք: Թեև վերոնշյալ դրույթներում առերևույթ հակասություն չկա, այս ձևակերպումն առաջացրել է թյուրընկալում և օրենսդրական բաց, որը շրջանցվել է: Այսպես, ՋՊՄԿ-ն հայտարարագրել է բաժնետերերի ժողովի անդամ հանդիսացող չորս միջանկյալ

ընկերության անուն, որոնցում նրանց իրական սեփականատերերը տիրապետում են ՋՊՄԿ բաժնետոմսերի ընդամենը 37.5 տոկոսին, որոնք սակայն չեն կարող համարվել իրական սեփականատեր առնվազն այն հիմքով, որ ֆիզիկական անձ չեն: Փոխարենը չի հայտարարագրվել ուղղակիորեն իրական սեփականատեր հանդիսացող անձանց բաժնեմասնակցության վերաբերյալ տեղեկատվությունը:

Հարկ է նշել, որ, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն առնվազն 10 տոկոս մասնակցության պահանջով հայտարարագրումն իր հերթին հնարավորություն չի տալիս բացահայտել դրանից ցածր, բայց զգալի ծավալով բաժնեմասերի տիրապետող անձանց, ինչը հատկապես կարևոր է հանրային ռեսուրսների պարագայում: Այն նաև հնարավորություն է տալիս կեղծ բաժնետերերի միջոցով քողարկել իրական սեփականատիրությունը: Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման առաջին փորձն արդեն իսկ վեր է հանում տվյալ շեմի խնդրահարույց լինելը և այն իջեցնելու անհրաժեշտությունը:

Իրական սեփականատերերի բաժնեմասնակցության ցածր շեմ սահմանելու հիմնական առարկություններից է այն, որ ընկերությունները պետք է ներկայացնեն չափազանց մեծ քանակությամբ անձանց տվյալներ, ինչը կարող է առաջացնել մեծ ծանրաբեռնվածություն նրանց համար: Այս առումով հարկ է նշել, որ ընդերքօգտագործող ընկերությունների ներկայացված հայտարարագրերով իրական սեփականատերերի թվաքանակը չի գերազանցում 8 ֆիզիկական անձը: Առարկության մեկ այլ հիմք է այն, որ իրատեսական չէ ֆոնդային բորսաներում ցուցակված բաժնեմասերի հայտարարագրումը՝ հաշվի առնելով դրանց առուծախի դինամիկան: Ակնհայտորեն, սա միջազգային մակարդակում լուծելու խնդիր է, այդուհանդերձ, հարկավոր է ձգտել սահմանելու որոշակի ողջամիտ շրջանակ, որի պարագայում գործնականում իրատեսական լինի նրանց բացահայտումը:

Առաջարկություն

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի ազատելու իրավասություն և այլն) պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է ավելացնել պահանջ, որպեսզի թե՛ բաժնետիրական և թե՛ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններն իրենց իրական սեփականատերերի հայտարարագրի հետ միասին ներկայացնեն նաև իրենց ընկերության բաժնետերերի և բաժնեմասնակցության ամբողջական կառուցվածքային սխեման, որտեղ արտացոլված կլինի ինչպե՛ս բոլոր մակարդակների միջանկյալ իրավաբանական անձանց, այնպե՛ս էլ ֆիզիկական անձանց բաժնեմասնակցությունը: Խճողված կառուցված ներկայացնելու

պարագայում ընկերությունը լիազոր մարմնի պահանջով պետք է գրավոր ներկայացնի պարզաբանում՝ ներկայացնելով նման կառուցվածքի հիմնավորումը:¹⁰

Իրական սեփականատերերի հայտարարագրման պահանջի բացառությունները պետք է լինեն ինչպես սահմանափակ և հիմնավորված: Առնվազն հանրային ռեսուրսները, ինչպես օրինակ՝ ընդերքը, օգտագործող ընկերությունների պարագայում պետք է առավելագույնս թափանցիկ լինի, թե ովքեր են ընկերությունների իրական սեփականատերերը:

Այս նկատառումով՝ առաջարկվում է իրական սեփականատերերի բացահայտման համար թույլ տալ բացառություններ միայն՝ 1. հանրային ռեսուրսներ օգտագործող 1%-ից ցածր բաժնեմասնակցությամբ անձանց իրավաբանական կամ ֆիզիկական անձանց համար, և 2. ՀՀ-ում արժեթղթերի կարգավորվող շուկաներում և ՀՀ կառավարության կամ ՀՀ կենտրոնական բանկի որոշմամբ սահմանման ենթակա միջազգային վստահելի բորսաներում ցուցակված իրավաբանական անձանց համար, սակայն՝ միայն դրանց ցուցակված բաժնետոմսերի ծավալի մասով:

4. Տվյալների հասանելիություն

Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց իրական սեփականատերերի պետական գրանցումն իրականացվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից՝ չնայած, որ ընդհանուր առմամբ, այս օրենքի 40-րդ հոդվածի համաձայն, պետական ռեգիստրի գործակալությունում գրանցվում են միայն ՍՊԸ-ների մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները: Բաժնետիրական ընկերությունների ռեեստր գործակալությունը չի վարում և նրան հասանելի չեն այդպիսի ընկերությունների վերաբերյալ տվյալները:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 40-րդ և 26-րդ հոդվածով սահմանված են ՍՊԸ-ներին վերաբերող կարգավորումներ առ այն, որ ՍՊԸ-ների գրանցման կամ որևէ բաժնեմասի օտարման դեպքում պետք է իրականացվի այդ գործողության պետական գրանցում: Եթե ՍՊԸ-ում բաժնեմասի սեփականատեր է դառնում օտարերկրյա կազմակերպություն, ապա վերջինիս հետ փոխկապակցված ընկերությունների և իրական

¹⁰ Այսպիսի պրակտիկա կարելի է ներմուծել՝ հիմք ընդունելով միջազգային ֆինանսավորող կազմակերպությունների կողմից ընկերությունների հարկային համապատասխանության ստուգման փորձը (օրինակ՝ EBRD) - tax due diligence, որտեղ հստակ պարզաբանվում է, թե ինչու է ձևավորել նման խճճված կառուցվածք, կամ ստացվում են արդյոք հարկային արտոնություններ և այլն:

սեփականատերերի վերաբերյալ տվյալները 10%-ից պակաս բաժնեմասնակցության դեպքում ՀՀ պետական ռեգիստրի գործակալությունում այլևս չեն գրանցվում:

Նշված օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պետական ռեգիստրում պահվող ՄՊԸ-ների մասին տեղեկությունները հրապարակային են՝ բացառությամբ ֆիզիկական անձանց անձնագրային տվյալների, սոցիալական քարտի համարի և նրանց բնակության հասցեների մասին տեղեկատվության: Գործնականում դրանք վճարովի են՝ 3,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր ընկերության համար, իսկ անվճար հասանելի են միայն զանգվածային լրատվամիջոցներին՝ վերոնշյալ օրենքում 2020 թվականի մարտի 6-ին կատարված փոփոխության համաձայն, ինչը խիստ սահմանափակում է տվյալների մատչելիությունը հետազոտությունների և հանրային վերահսկողության համար:

Բաժնետիրական ընկերությունների պետական գրանցումն իրականացվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, որի 51-53-րդ հոդվածներով կարգավորվում են դրանց բաժնետերերի ռեեստրի վարման հիմքերն ու կարգը: Բաժնետիրական ընկերությունների համար վարվում է ընկերությունների բաժնետերերի ռեեստր՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության հաշվի օպերատորների (բանկեր, ներդրումային ընկերություններ) կողմից: Վերջինների մոտ բացվում են պահառության հաշիվներ, որտեղ արտացոլվում են բաժնետիրական ընկերություններում բաժնետեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկությունները, ներառյալ՝ նրանց իրական շահառուների, վերջիններիս կողմից իրենց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի (բաժնետոմսերի) օտարման հետ կապված գործարքները¹¹: Պահառության հաշիվներ ունեն ինչպես Հայաստանում գրանցված կազմակերպությունները, այնպես էլ՝ Հայաստանից դուրս գրանցվածները, եթե բաժնետոմս են ձեռք բերում Հայաստանում գրանցված բաժնետիրական ընկերությունում: Պահառության հաշիվ բացելիս իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14 կետի համաձայն պարտավոր են բացահայտել «իրական շահառուներին», որոնք ներառում են 20% և ավելի բաժնետոմսեր ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց, դրանց կանոնադրական կապիտալի 20% և ավելի տոկոս ունեցող սուբյեկտներին և այդպես շարունակ: Քսանից փոքր բաժնեմաս, բաժնետոմս, փայ և այլն ունեցող բաժնետերերի տվյալները պահառուները չեն պահանջում, եթե չունեն կասկածներ համապատասխան ընկերությունների առումով: Քաղաքական ազդեցության կամ պաշտոնների անհամատեղելիության հետ կապված հարցերը ներպետական մակարդակում դիտարկման առարկա չեն, իսկ միջազգային մակարդակում ՔԱՈՒԱ-ների բացահայտման մեխանիզմները արդյունավետ չեն:

¹¹ ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշում՝ «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ը հաստատելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=79619>

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 199-րդ հոդվածի համաձայն՝ «Կենտրոնական դեպոզիտարիան, նրա մարմինները, դրանց ղեկավարները և աշխատակիցները պարտավոր են պահպանել և երրորդ անձանց հասանելի չդարձնել այն տեղեկատվությունը, որը նրանք ձեռք են բերել իրենց պաշտոնական պարտականությունների կատարման կամ Կենտրոնական բանկի հետ համագործակցության կապակցությամբ, եթե այն ենթակա չէ հրապարակման կամ այլ անձանց տրամադրման՝ օրենքի, այլ իրավական ակտերի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների համաձայն»:

Այսինքն, բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ տվյալները կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ենթակա չեն փոխանցման իրավաբանական անձանց պետական ռեգիստր, և իրական սեփականատերերի մասին տեղեկությունները իրավաբանական անձանց պետական ռեգիստր ներկայացվում են հենց ընկերությունների կողմից: «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 22-րդ մասի համաձայն՝ և՛ ՓԲԸ, և՛ ՍՊԸ-ները իրենց իրական սեփականատերերի, ինչպես նաև ինչպես նաև դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները պարտավոր են ներկայացնել պետական ռեգիստր 40 օրվա ընթացքում:

Առաջարկություն

Անհրաժեշտ է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև կենտրոնական դեպոզիտարիայի վերաբերյալ իրավական հարաբերությունները կարգավորող՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումներում կատարել լրացում, որը հնարավորություն կտա ինչպե՛ս իրավաբանական անձանց պետական ռեգիստրին, այնպե՛ս էլ ՀՀ քաղաքացիների և հարցման հիման վրա տրամադրել Կենտրոնական դեպոզիտարիայում պահվող՝ բաժնետիրական ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ պետական ռեգիստրում բացակայող տվյալները: Մասնավորապես, պետք է տեղեկատվության ազատության իրավունքի հիման վրա հասանելի դառնան բաժնետիրական ընկերությունների սեփականությանն առնչվող՝ բոլոր նախորդ տարիների տեղեկությունները:

Անհրաժեշտ է իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պահվող տեղեկատվությունը անվճար և ամբողջությամբ՝ բաց տվյալների և բաց աղբյուրի ձևաչափով հասանելի դարձնել հանրության ներկայացուցիչների համար:

5. Վերահսկողություն և պատասխանատվություն

Ինչպես նշվել է վերևում, ուսումնասիրված մի շարք հայտարարագրերում արձանագրվել են պահանջվող, սակայն չլրացված տվյալների փաստեր: Մի դեպքում լրացված չէ

միջանկյալ իրավաբանական անձի ցուցակման բորսան ու բաժնետերերի ձեռքբերման ամսաթիվը, մյուսում՝ ֆոնդային բորսայում ցուցակված լինելը և այլն:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի իմաստով պետական ռեզիստրի գործակալությունը իրեն ներկայացվող տեղեկությունների ճշգրտության ստուգում հիմնականում չի իրականացնում: Պահառու կազմակերպությունների կողմից պատշաճ չեն ստուգվում նաև բաժնետիրական ընկերությունների առնվազն 20 տոկոսից ցածր բաժնեմաս ունեցող բաժնետերերի վերաբերյալ տվյալները, քանի որ գործող օրենսդրությամբ այդպիսի պահանջ չկա: Այսինքն, իրական սեփականատերերի ինստիտուտի շրջանակներում ներկայացված տվյալների հավաստիության ապահովումը, ըստ էության, գտնվում է դրանք ներկայացնող ընկերությունների բարեխղճության և պատասխանատվության ներքո, ինչը, ցավոք, Հայաստանում դեռևս չունի համապատասխան մշակութային հենք: Բացակայում է հայտարարագրվող տվյալների հավաստիության ապահովման որևէ երաշխիք, ինչը հարցականի տակ է դնում առհասարակ իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման նպատակահարմարությունը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ որևէ վարչական կամ քրեական պատասխանատվություն իրական սեփականատերերի հայտարարագրում ուշացած, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու համար, ինչը չի ապահովում սահմանված պահանջների կիրարկումը:

Որոշ պատասխանատվություն սահմանված է ընդերքօգտագործողների համար ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով: Մասնավորապես, օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն, ընկերությունը կարող է ստանալ գրավոր զգուշացում, եթե սահմանված ժամկետում լիազոր մարմնին չի ներկայացնում իրական սեփականատերերի կամ դրանց փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը, կամ ներկայացված տվյալները կեղծ են կամ ոչ ամբողջական: Սահմանված ժամկետում զգուշացման հիմքերը չվերացնելու դեպքում ընդերքօգտագործման իրավունքը կասեցվում է մինչև 120 օրով: Եթե զգուշացման կամ կասեցման մասին ծանուցումը ստանալուց հետո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում, կամ մինչև լիազոր մարմնի կողմից կասեցման համար սահմանված ժամկետը լրանալը ընկերությունը չի վերացնում նշված հիմքերը, ապա ընդերքօգտագործման իրավունքը դադարում է:

Առաջարկություն

Անհրաժեշտ է հայտարարագրման էլեկտրոնային համակարգում պարտադիր դաշտերի չլրացման պարագայում սահմանել հայտարարագրերը համակարգի կողմից չընդունելու պահանջ:

Ի լրումն, կարևոր է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով նախատեսել հայտարարագրերի ամբողջականության և հավաստիության ապահովման համար պատասխանատու պաշտոնյայի հաստիք կամ ստորաբաժանում:

Հարկավոր է սահմանել հայտարարագրվող տվյալների ուսումնասիրման/ստուգման մեխանիզմ՝ իրականացնելով ընտրանքային ուսումնասիրություններ, այդ թվում՝ հիմք ընդունելով ռիսկային գործոնները և լրագրողական հետաքննության բացահայտումները:

Այս առումով, անհրաժեշտ է հզորացնել պետական ռեգիստրի տեխնիկական և տեղեկատվական հզորությունները և զարգացնել կադրերի կարողությունները:

ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում լրացումներ կատարելու միջոցով հարկավոր է վարչական պատասխանատվություն սահմանել իրական սեփականատերերի հայտարարագիր չներկայացնելու կամ հայտարարագրում կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու համար:

Հարկ է, որ իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալներ չներկայացրած ընկերությունները սեղմ ժամկետներում վերանայեն իրենց հայտարարագրերն ու հրապարակեն իրական սեփականատերերին:

Անհրաժեշտ է կիրառության մեջ դնել ընդերքօգտագործման ոլորտում գործող ընկերությունների կողմից տվյալներ չներկայացնելու կամ կեղծ տվյալներ ներկայացնելու համար ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված պատժամիջոցները:

ԱՃԹՆ բազմաշառու խմբի քաղաքացիական հասարակության խմբակցություն

12 հունիսի 2020 թ.